ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԻՐԱԲ ՌՈՒԲԻԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԶԵՆՔԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВИРАБ РУБИКОВИЧ АМБАРЦУМЯН

ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ НЕЗАКОННОГО ОБОРОТА ОРУЖИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание учёной степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – "Уголовное право и криминология, уголовно-исполнительное право"

ЕРЕВАН 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սերգեյ Վահանի Առաքելյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սերժիկ Սերգեյի Ավետիսյան**, իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Արման Համլետի Հովհաննիսյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ՆԳՆ կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 2-ին՝ 14:30-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2026 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель:	доктор юридических наук, профессор **Сергей Ваганович Аракелян**
Официальные оппоненты:	доктор юридических наук, профессор **Сержик Сергеевич Аветисян,** кандидат юридических наук, ассистент **Арман Гамлетович Оганнесян**
Ведущая организация:	**Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 2 июля 2026 года в 14:30 на заседании Специализированного совета КВОН РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1)

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 1 июня 2026 года.

Ученный секретарь специализированного совета
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Զենքը, ունենալով կարևոր նշանակություն իրավակարգի պահպանման, մարդու իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման գործընթացում, հաճախ օգտագործվում է նաև մարդու իրավունքների խախտման նպատակով:

Այն փաստը, որ հրազենը բռնի արարքներ և հանցանքներ կատարելու հիմնական գործիքն է, լայն ճանաչում է ձեռք բերել: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն իր զեկույցում այն ընդհուպ անվանել է «զանգվածային ոչնչացման զենք»:

Ըստ «Small Arms Survey» հետազոտական կենտրոնի՝ արդի աշխարհում համաշխարհային շրջանառության մեջ գտնվում է շուրջ մեկ միլիարդ հրազեն: Ընդ որում, հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակում քաղաքացիական անձանց մոտ գտնվող զենքի համաշխարհային պաշարներն աճել են՝ 650 միլիոնից հասնելով շուրջ 857 միլիոնի:

Անդրադառնալով զենքի ապօրինի շրջանառության վերաբերյալ ներպետական վիճակագրական տվյալներին՝ հարկ է փաստել, որ հանցավորության կառուցվածքում նկատվում է զենքի ապօրինի շրջանառության դեպքերի աճի միտում: Այսպես, ըստ պաշտոնական վիճակագրության՝ ՀՀ-ում 2020 թվականին գրանցվել է հանցագործության 22,008 դեպք, որից հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության՝ 553 դեպք, 2021 թվականին՝ 23,834 դեպք, որից հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության՝ 617 դեպք, 2022 թվականին՝ 29,820 դեպք, որից հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության՝ 681 դեպք, 2023 թվականին՝ 31,598 դեպք, որից հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության՝ 999 դեպք, 2024 թվականին՝ 31,320 դեպք, որից հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության՝ 698 դեպք, 2025 թվականին՝ 34,265 դեպք, որից հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության՝ 945 դեպք:

Այս առումով հարկ է նաև արձանագրել, որ 2010 թվականից ի վեր հանցագործությունների ընդհանուր քանակում վերջին երկու տարիներին գրանցվել են հրազենի և ռազմամթերքի գործադրմամբ կատարված հանցագործությունների ամենաբարձր ցուցանիշները՝ 2024 թվականին՝ 94, իսկ 2025 թվականին՝ 115 հանցագործություն: Նման իրավիճակը վկայում է հանցավորության վտանգավորության մակարդակի բարձրացման մասին, քանի որ զենքի գործադրմամբ կատարվող հանցանքները հաճախ հանգեցնում են անդառնալի հետևանքների: Այսպիսով, զենքի ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարը ժամանակի հրամայականներից է:

Այս համատեքստում հարկ է նշել, որ զենքի ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարի երաշխիքներից է նաև քրեական օրենսդրությունը: Այս ոլորտում հասարակական հարաբերությունների զարգացմանը համահունչ հստակ և առաջադեմ իրավակարգավորումները, արարքների ճիշտ և հիմնավորված որակումները, արդարացի պատիժները, քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը կարող են երաշխավորել անձանց, կազմակերպությունների, պետության և հասարակության անվտանգությունը, նպաստել զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությանը:

Մինչդեռ, մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ քրեական օրենսդրության անկատարության հետևանքով իրավակիրառ պրակտիկան հաճախ սխալ ուղղությամբ է ընթանում՝ հանգեցնելով անձանց արարքների ոչ ճիշտ որակումների: Բացի այդ, քրեական օրենսդրության երբեմն ոչ միանշանակ ընկալումն իրավակիրառ գործունեության ընթացքում ստանում է տարբեր դրսևորումներ՝ ձևավորելով խայտաբղետ, հաճախ՝ հակասական դատախազաքննչական և դատական պրակտիկա:

Հարկ է նշել, որ զենքի շրջանառության իրավական կարգավորումների ուսումնասիրությունը և վերլուծությունն ավելի է կարևորվում արդի ժամանակներում, երբ Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ է դրվել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքը, որով զգալիորեն մեղմացվել են քաղաքացիական զենքի ձեռքբերման և տիրապետման կանոնները: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման լույսի ներքո գնահատել նաև նոր իրավակարգավորումները:

Վերոգրյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրների համալիր և համապարփակ ուսումնասիրելն է, առկա խնդիրները վերհանելը և դրանց լուծման առաջարկներ ներկայացնելը:

Դրված նպատակներին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը պայմանավորող նախադրյալները,
- հետազոտել զենքի օրինական շրջանառության ազատականացման բացասական և դրական կողմերը,
- հետազոտել քաղաքացիական զենքի շրջանառության միջազգային ստանդարտները,
- քաղաքացիական զենքի շրջանառության միջազգային ստանդարտների լույսի ներքո գնահատել քաղաքացիական զենքի շրջանառության ներպետական կանոնակարգերը,
- կատարել զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 334-339-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի քրեաիրավական վերլուծություն,
- ուսումնասիրել ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերի քրեաիրավական հիմնահարցերը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրներն են: Հետազոտության առարկան են զենքի շրջանառությունը կանոնակարգող, ինչպես նաև զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող ներպետական, այլ պետությունների և միջազգային իրավանորմերը, ինչպես նաև վերաբերելի իրավակիրառ պրակտիկան և հետազոտողների՝ ուսումնասիրվող թեմային նվիրված աշխատանքները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական

հիմքերը: Հայկական մասնագիտական գրականությունում զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները մինչ այժմ համալիր և համակարգային հետազոտման չեն ենթարկվել:

Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները հետազոտվել են Ի. Ի. Բիկեևի «Պատասխանատվությունը հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի ապօրինի շրջանառության համար» (2000թ.), Ս. Մ. Մալկովի «Քրեական պատասխանատվությունը զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի հափշտակման համար» (2000թ.), Ա. Ֆ. Սոկոլովի «Հանցագործությունները զենքի շրջանառության ոլորտում (ՌԴ քրեական օրենսգրքի 222-րդ և 223-րդ հոդվածներ). իրավաբանական տեխնիկայի և պատասխանատվության տարբերակման հիմնախնդիրները» (2002թ.), Ա. Ն. Կարախանովի «Քրեական պատասխանատվությունը ՌԴ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածով նախատեսված զենքի հետ ապօրինի գործողությունների համար» (2002թ.), Օ. Յու. Տորոպիգինի «Քրեական պատասխանատվությունը գազային և սառը զենքի ապօրինի պատրաստման, ձեռքբերման, իրացման կամ կրելու համար» (2003թ.), Օ. Լ. Բագրովայի «Քրեական պատասխանատվությունը զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի հափշտակման կամ շորթման համար» (2004թ.), Լ. Վ. Իվանովայի «Հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի հափշտակումը և շորթումը» (2004թ.), Ե. Ա. Կացի «Քրեական պատասխանատվությունը զենքի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի ապօրինի ձեռքբերման, փոխանցման, իրացման, պահման, փոխադրման կամ կրելու համար» (2005թ.), Ա. Ի. Շիրկինի «Ռուսաստանի Դաշնությունում զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի քրեաիրավական և քրեագիտական ասպեկտները» (2008թ.), Մ. Ի. Կատբամբետովի «Զենքի կիրառման քրեաիրավական բնութագիրը» (2013թ.) և այլ ատենախոսական աշխատություններում:

Զենքի ապօրինի շրջանառության որոշ հիմնախնդիրներ հետազոտված են ամերիկացի քրեագետ, Ֆլորիդայի պետական համալսարանի պրոֆեսոր Գերի Քլեքի «Մոտ տարածությունից. զենքը և բռնությունը Ամերիկայում» (1991թ.), «Զենքի վերահսկման քաղաքականության վերլուծություն» (1997թ.), «Զինված» (2001թ.) աշխատություններում, ոլորտի ամերիկացի հետազոտողներ Դեբորա Ազրելի, Ֆիլիպ Զ. Քուկի և Մեթյու Միլլերի «Հրազենի տարածվածությունը նահանգային և տեղական մակարդակներում. չափման մեթոդներ, կառուցվածք և միտումներ» (2004թ.) աշխատությունում, «Small Arms Survey» հետազոտական կազմակերպության ավագ խորհրդատու, Օլդ Դոմինիոն համալսարանի (Նորֆոլկ, Վիրջինիա) քաղաքագիտության ավագ դասախոս Ահարոն Կարպի «Small Arms Survey» հետազոտական կազմակերպության 2001 թվականից մինչ օրս հրապարակվող զեկույցներում, Վ. Պ. Պոլոզովի «Զենքը քաղաքացիական հասարակությունում» (2001թ.) և ոլորտի այլ հետազոտողների աշխատություններում:

Հիշատակված հետազոտություններն իրապես արժեքավոր են և մեծ ներդրում են ունեցել քրեական իրավունքի գիտության զարգացման հարցում, սակայն հետազոտվող ոլորտում բազմաթիվ հիմնախնդիրներ համապարփակ և համալիր լուսաբանման ու ուսումնասիրման անհրաժեշտություն ունեն:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության

իրավական և փորձառական հիմքերը կազմել են զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրներին վերաբերող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, միջազգային/վերպետական իրավական նորմերը, դատական պրակտիկայի նյութերը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և այլ պետությունների դատարանների դատական ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, ընդհանրացման, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության, համակարգա-կառուցվածքային և իրավական մոդելավորման մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը ներպետական իրավունքում խորքային և համապարփակ գիտահետազոտական առաջին աշխատանքն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համակարգված, համալիր և բազմակողմանի հետազոտել զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանու-թյան ներկայացվող դրույթներում, եզրակացությունում, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Զենքի շրջանառության ազատականացումը (լիբերալացումը) իր բացասական դրսևորումներով հանդերձ արդարացված է հետևյալ հիմնավորումներով՝

➢ **Զենքի մասնավոր ձեռքբերման նկատմամբ հսկողության խստացումը աննշան ազդեցություն է ունենում հանցավորության մակարդակի վրա**:

➢ Զենքի գործածմամբ կատարվող հանցագործությունները հիմնականում հանդիսանում են **սոցիալ-էթնիկական գործոնների արդյունք** և կապված չեն քաղաքացիական հասարակության՝ զենքի այս կամ այն տեսակին հասանելիության հետ:

➢ **Զենքի օրինական շրջանառությունն ամբողջությամբ արգելելու պայմաններում՝ միևնույնն է «սև շուկան» կշարունակի գործել**, և հանցագործները կշարունակեն զենք ձեռք բերել անօրինական ճանապարհով:

➢ **Զենք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումները նախադրյալներ են ստեղծում զենքի ապօրինի շրջանառության մեծ ծավալների համար՝ նպաստելով հանցավորության աճին**:

➢ **Անձանց կողմից զենքը հաճախ օգտագործվում է ինքնապաշտպանության նպատակով**, և զենքի շրջանառության ազատականացումը կարող է ընդհանուր կանխարգելիչ միջոց լինել հանցավոր ոտնձգությունների դեմ պայքարում:

➢ Մեկ ուրիշին սպանելու, մարմնական վնասվածք հասցնելու կամ ինքնասպանություն գործելու մտադրություն ունեցող **անձը զենքի փոխարեն գտնում է այլընտրանքային գործիքներ** (տնտեսակենցաղային նշանակություն ունեցող կամ նախապես պատրաստված կամ հարմարեցված և զենք

չհանդիսացող տարատեսակ առարկաներ)՝ **իր մտադրությունն իրագործելու համար**:

➢ Զենքի շրջանառության նկատմամբ վերահսկողություն իրակա-նացնելու համար արդյունավետ կանոնակարգերի և մեխանիզմների առկայության դեպքում զենքի շրջանառության ազատականացումը կարող է ավելի շատ դրական, քան բացասական ազդեցություն ունենալ և **ամուր հիմք ստեղծել հասարակությունում զենք կրելու մշակույթ ձևավորելու համար**:

2. Գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում այն անձանց, որոնք դատապարտվել են **հրազենի գործադրմամբ** դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, մինչդեռ զենքի մյուս տեսակներով կամ ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարած անձանց համար օրինական զենք ձեռք բերելու որևէ արգելք նախատեսված չէ: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք օրենսդրորեն բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը **զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ** դիտավորյալ հանցանք կատարելու համար դատապարտված անձին՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

3. Անձի կողմից նախկինում երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարած լինելու հանգամանքը վկայում է տվյալ անձի՝ նորմայից շեղվող, հակասոցիալական վարքագծի և բռնություն գործադրելու հակումների մասին: Այդ անձի մոտ զենքի առկայությունը կարող է արդիականացնել ագրեսիվ պահանջմունքները՝ վերջինիս մղելով բռնությամբ զուգորդված նոր հանցանք կատարելու, որը հղի է անդառնալի հետևանքներով հնարավոր զոհի համար: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը **երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված** ոչ մեծ և (կամ) միջին ծանրության հանցանքներ կատարած անձին՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

4. Քրեական օրենսգրքի ձևակերպումներում ողորկափող հրազենին առնչվող բացառությունը սահմանող դրույթը գործնականում պետք է կիրառվի՝ հիմք ընդունելով հետևյալ մեկնաբանությունները՝

➢ Չնայած քաղաքացիական զենքի տեսակների շարքում օրենսդիրը ներառել է ողորկափող հրազենը՝ առանց կոնկրետացնելու դրա առանձին հատկանիշներ, այնուհանդերձ, ցանկացած ողորկափող հրազեն ինքնին չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական», և այդ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքացիական զենքի շրջանառության համար «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

➢ Ինքնաշեն, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների ենթարկված գործարանային ծագման ողորկափող հրազենը, որը կորցրել է իր նախնական (գործարանային) նշանակությունը (խաթարվել են տվյալ հրազենին ներկայացվող քրեագիտական պահանջները, փոխվել են մարտավարատեխնիկական հատկությունները), չի կարող դասակարգվել որպես «քաղաքացիական», հետևաբար, դրա ապօրինի շրջանառությունը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով:

5. Համապատասխան ստանդարտներում սառը զենքի համար սահմանված կառուցվածքային տարբերակիչ հատկանիշները հնացած են և արհեստական՝ զենքերը կենցաղային նշանակության կամ հանրորեն վտանգավոր այլ առարկաներից տարբերակելու համար: Անձի կյանքի և առողջության համար սպառնալիքի տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն, և որևէ քրեագիտական չափանիշ ինքնին չի կարող որոշել առարկայի իրական հանրային վտանգավորությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով սույն հարցի վերաբերյալ արտասահմանյան երկրներում ձևավորված լավագույն փորձը՝ առաջարկում ենք ապաքրեականացնել սառը զենք կրելը, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքից դուրս բերել սառը զենքի վերաբերյալ առկա իրավակարգավորումները, միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ գլխում նախատեսել նոր հանցակազմ, որը քրեական պատասխանատվություն կսահմանի հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60 մմ երկարության շեղբով կամ սայրով ծալովի դանակի), կռփազենք, լախտ, մահակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելու համար:

6. Օրենսդիրը, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք նախատեսելով կոնկրետ հանցանքը՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, անհարկի նեղացրել է վերոնշյալ որակյալ հանգամանքի բովանդակությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև մտքում ունենալով միասնական իրավակարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք հիշյալ քրեահրավական նորմը վերաձևակերպել և որպես համապատասխան հանցակազմերի որակյալ հատկանիշ նախատեսել հանցանքը՝ «զենքի կամ դանակի, կռփազենքի, լախտի, մահակի կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկայի, ինչպես նաև մարմնական վնասվածք պատճառելու ունակությամբ օժտված միջոցի գործադրմամբ» կատարելը:

7. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում ամրագրված «զենք կրել», «զենք պահել» և «զենք տեղափոխել» հասկացությունների բովանդակությունը չի կարող անտեսվել ՀՀ քրեական օրենսգրքում զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումները մեկնաբանելիս: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք.

- «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում ընդլայնել «զենք կրել» հասկացության բովանդակությունը՝ դրանում ներառելով այն դեպքերը, երբ զենքը գտնվում է այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն:
- «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում ընդլայնել «զենք պահել» հասկացության բովանդակությունը՝ դրանում ներառելով այն դեպքերը, երբ անձը զենքը տիրապետում է շինություններում, գաղտնարաններում, ինչպես նաև այնպիսի վայրերում, որոնք ապահովում են զենքի պահպանությունը:

➢ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում բացահայտել «զենք ձեռք բերել», «զենք իրացնել» և «զենք առաքել» հասկացությունների բովանդակությունը, ինչը կնպաստի իրավական որոշակիության մակարդակի բարձրացմանը՝ հնարավորինս զերծ պահելով իրավական պրակտիկան տարամեկնաբանություններից և թյուրըմբռնումներից:

8. Զենքի թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) հանգեցնում է ոչ միայն սահմանված վարչաիրավական կարգավորումների չպահպանմանը, այլև էականորեն խաթարում է զենքի շրջանառության իրավական ռեժիմը: Օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվությունների ժամկետների լրանալուց հետո զենքի շրջանառությունը փաստացի իրականացվում է առանց իրավական հիմքի: Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով սույն հարցի վերաբերյալ արտասահմանյան երկրներում ձևավորված լավագույն փորձը՝ առաջարկում ենք.

➢ Թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո, առանց սահմանված կարգով դրանք երկարաձգելու, զենք պահելու կամ կրելու (իրավաբանական անձի դեպքում՝ պահելու կամ օգտագործելու) դեպքում անձի արարքը որակել զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:

➢ Անմիջապես քրեական պատասխանատվության կիրառումը բացառելու նպատակով՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի համար «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով սահմանել երկամսյա արտոնյալ ժամկետ:

➢ Օրենսդրորեն սահմանել, որ արտոնյալ ժամկետում անձն իրավունք չունի կրել կամ օգտագործել այդ զենքը: Այս արգելքին հակառակ՝ զենքը կրելը կամ օգտագործելը նույնպես պետք է որակվի զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:

➢ Մշակել և ներդնել թույլտվությունների ժամկետների ավարտի վերաբերյալ նախնական ծանուցման (reminder notice) արդյունավետ էլեկտրոնային գործիքակազմեր:

9. Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավանորմը բովանդակային առումով վերաձևակերպել՝ բացառելով խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելն այն դեպքերում, երբ զենքի հանձնումը տեղի է ունենում անձի ձերբակալման, դա հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների ընթացքում կամ դրանցից անմիջապես առաջ, երբ տեղում նախապատրաստվում է նշված գործողությունների իրականացումը: Ընդ որում, դրա բովանդակությունը սահմանելիս հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք հստակեցնել, որ ձերբակալման դեպքում զենքը հանձնած անձը խրախուսական նորմի ուժով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հանձնում է ապօրինի կերպով կրվող (հագուստում, իր մոտ գտնվող իրերում կամ մարմնի վրա գտնվող), այլ ոչ թե պահվող զենքը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության թեմայի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում ներպետական իրավունքում առաջին անգամ մշակվել է զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրներին նվիրված համալիր աշխատանք: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտությունների, ինչպես նաև այն դասընթացների շրջանակներում, որոնց առարկան առնչվում է զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրներին:

Հետազոտության թեմայի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները, վերլուծությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեությունում, ինչպես նաև նպաստել դատական և դատախազաքննչական պրակտիկայի կատարելագործմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի՝ հրապարակված թվով 7 հոդվածներում: Հետազոտության արդյունքները հեղինակի կողմից ներկայացվել են նաև գիտաժողովներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ներառված 8 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, մշակվածության աստիճանը, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ «**Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը սահմանող օրենսդրության սոցիալական հիմնավորվածությունը**» վերտառությամբ 1-ին գլխի՝ *«Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը պայմանավորող նախադրյալները»* վերտառությամբ 1-ին պարագրաֆում քննարկվում են այն նախադրյալները, որոնք անհրաժեշտ են դարձնում զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող իրավանորմերի ընդունումը:

Ատենախոսության 1-ին գլխի՝ *«Զենքի օրինական շրջանառության ազատականացման բացասական և դրական կողմերը»* վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հետազոտվել և վերլուծվել են զենքի շրջանառության ազատականացման դրական և բացասական կողմերի վերաբերյալ ձևավորված մոտեցումները:

Ատենախոսության՝ «**Զենքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումները մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում**» վերտառությամբ 2-րդ գլխի՝ *«Քաղաքացիական զենքի շրջանառության միջազգային ստանդարտները»* վերտառությամբ 1-ին

պարագրաֆում հետազոտվել են զենքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումները, ինչպես նաև քաղաքացիական զենքի շրջանառությունը կանոնակարգող տարածաշրջանային համաձայնագրերը և տիպային օրենքները: Բացի այդ, առանձնացվել են ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մարմինների և մեխանիզմների կողմից պետություններին հասցեագրված առավել կարևոր առաջարկներն ու միջոցառումները, որոնք միտված են մարդու իրավունքների պաշտպանության նպատակով արդյունավետ կերպով կարգավորել քաղաքացիական անձանց կողմից հրազենին հասանելիությունը:

Իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմել զենքի շրջանառության ներպետական կարգավորման ընդհանուր վիճակի վերաբերյալ՝ ուրվագծելով նաև ներպետական օրեսդրության կարգավորումների արդիականացման և իրավական մոդելավորման հեռանկարը:

Ատենախոսության՝ «**Զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, այլ նյութերի, սարքերի և առարկաների ապօրինի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի քրեաիրավական բնութագիրը**» վերտառությամբ 3-րդ գլխի՝ *«Հանցագործության օբյեկտը և առարկան»* վերտառությամբ 1-ին պարագրաֆում քննարկման առարկա են դարձել ՀՀ քրեական օրենսգրքի 334-339-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների տեսակային և անմիջական օբյեկտը, ինչպես նաև առարկան: Այս համատեքստում բացահայտվել են քրեական իրավունքի տեսությունում «հասարակական անվտանգություն» հասկացության, ինչպես նաև քննարկվող հանցագործությունների անմիջական օբյեկտի բովանդակության վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր մոտեցումները:

Բացի այդ, բացահայտվել և վերլուծվել են նշված հանցագործությունների առարկա հանդիսացող՝ հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, ակոսափող հրազենի փամփուշտների, պայթուցիկ նյութի, պայթեցման սարքի, քաղաքացիական ողորկափող հրազենի, գազային, օդաճնշիչ, սառը և նետողական զենքի բովանդակությունը:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ *«Հանցագործության օբյեկտիվ կողմը»* վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հետազոտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 334-339-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների օբյեկտիվ կողմի դրսևորումները: Իրականացված հետազոտության արդյունքում ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի և «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի մի շարք հոդվածների լրամշակմանը:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ *«Հանցագործության սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը»* վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հետազոտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 334-339-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների սուբյեկտիվ հատկանիշները: Այս համատեքստում առանձնացվել և վերլուծվել են հանցագործության սուբյեկտի պարտադիր հատկանիշները, ինչպես նաև զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցագործությունների շրջանակում հատուկ սուբյեկտով հանցագործությունները: Միևնույն

ժամանակ, քննարկման առարկա են դարձել հիշյալ հանցագործությունների սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ *«Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերի քրեաիրավական բնութագիրը»* վերտառությամբ 4-րդ պարագրաֆում հետազոտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով և 336-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմերը: Իրականացված հետազոտության արդյունքում առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը շարադրել նոր բովանդակությամբ: Միևնույն ժամանակ, տրվել են այդ նորմի գործնական կիրառման համար անհրաժեշտ մեկնաբանությունները:

Ատենախոսության **եզրակացությունում**, ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Զենքի հետ ապօրինի «շփումների» համար պատասխանատվություն նախատեսող իրավանորմերի ամբողջությունը հանդիսանում է կանխարգելիչ միջոց, որը չեզոքացնում է զենքի ապօրինի շրջանառությունից բխող՝ հասարակական կարգի, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար վտանգ ստեղծող պայմանները:

2. Հանրային առողջության և անվտանգության նկատառումներից ելնելով՝ աշխարհի շատ երկրներ ներկայումս սահմանափակում են հրազենի ձեռքբերումն ու օգտագործումը՝ որպես զենքի վերահսկման ազգային քաղաքականության մաս: Այս համատեքստում կարելի է առանձնացնել որոշ ընդհանուր սկզբունքներ, որոնց վրա հիմնվում են պետությունների՝ զենքի շրջանառության ոլորտը կարգավորող օրենքները: Մասնավորապես, ստանդարտները, որոնք ձևավորվել են ազգային օրենքների հիման վրա ներառում են՝

- սեփականատերերի լիցենզավորում,
- զենքի գրանցում,
- օրինական օգտագործման հստակ չափանիշների սահմանում,
- զենքի տիրապետման համապատասխանություն,
- տարիքային սահմանափակում,
- զենքի քանակի սահմանափակում,
- ռազմական նշանակության հրաձգային զենք ունենալու արգելք,
- հասարակական վայրերում զենք կրելու արգելք:

3. Զենքի շրջանառությունը կանոնակարգող ներպետական օրենսդրության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ զենքին հասանելիություն ապահովելու ներպետական մի շարք իրավակարգավորումներ չեն բխում միջազգային փաստաթղթերով սահմանված՝ թույլտվությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու և անձի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության ստանձնած պոզիտիվ պարտավորություններից:

3.1. Այսպես, գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում այն անձանց, որոնք դատապարտվել են **հրազենի գործադրմամբ** դիտավորյալ հանցագործություն կատարելու

համար, մինչդեռ հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար վտանգ ստեղծող զենքի մյուս տեսակներով (սառը, նետողական և այլն) կամ ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարած անձանց համար օրինական զենք ձեռք բերելու որևէ արգելք նախատեսված չէ: Ըստ էության, օրենսդրությամբ նախատեսված նման տարբերակված մոտեցումը որևէ կերպ հիմնավորված չէ և չի բխում սույն ոլորտում ընդունելի կարգավորումների տրամաբանությունից:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք օրենսդրորեն բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը **զենքի**, **ռազմամթերքի**, **պայթուցիկ նյութի** կամ **պայթեցման սարքի** գործադրմամբ դիտավորյալ հանցանք կատարելու համար դատապարտված անձին՝ անկախ այդ անձի դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

3.2. Բացի այդ, գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն կարող են ստանալ անձինք, ովքեր նախկինում դատապարտվել են այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար, որոնք ուղղված են ինչպես անձի կյանքի (օրինակ՝ սպանության) կամ առողջության (օրինակ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու), այնպես էլ այլ՝ սեփականության (օրինակ՝ ավազակության) կամ հասարակական անվտանգության (օրինակ՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու) դեմ: Նման իրավիճակը սպառնալիք է պարունակում անձի, հասարակության և պետության անվտանգության տեսանկյունից:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք օրենսդրորեն բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձին՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

3.3. Անձի կողմից նախկինում երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարած լինելու հանգամանքը վկայում է տվյալ անձի՝ նորմայից շեղվող, հակասոցիալական վարքագծի և բռնություն գործադրելու հակումների մասին: Այդ անձի մոտ զենքի առկայությունը կարող է արդիականացնել ագրեսիվ պահանջմունքները՝ վերջինիս մղելով բռնությամբ զուգորդված նոր հանցանք կատարելու, որը հղի է անդառնալի հետևանքներով հնարավոր զոհի համար: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը **երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված** ոչ մեծ և/կամ միջին ծանրության հանցանքներ կատարած անձին՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

3.4. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում՝

(…)

3) եթե անձը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր

հանցանք կատարելու համար՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից, կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

3.1.) եթե անձը երկու կամ ավելի անգամ դատապարտվել է բռնությամբ զուգորդված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու համար՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից, կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

3.2.) եթե անձը դատապարտվել է զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցանք կատարելու համար՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից, կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով. (…)»:

3.5. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված իրավակարգավորումների համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ-ում արգելվում է քաղաքացիական և ծառայողական զենքի վրա տեղադրել անաղմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ, ինչպես նաև զենք ուղարկել կամ առաքել փոստով կամ ուղեբեռով: Ընդ որում, դրանց բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ վերը նշված պահանջները վերաբերում են օրինական շրջանառության մեջ գտնվող զենքին:

Այնուհանդերձ, ոլորտին վերաբերելի իրավակարգավորումների ուսում-նասիրության արդյունքում հնարավոր է փաստել, որ զենքի շրջանառության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիշյալ պահանջների կատարումը երաշխավորված չէ պետական հարկադրանքի կիրառմամբ:

Հիշյալ իրավիճակը շտկելու նպատակով առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել զանցակազմերով, որոնցով վարչական պատասխանատվություն կնախատեսվի քաղաքացիական և ծառայողական զենքի վրա անաղմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելու, ինչպես նաև փոստով կամ ուղեբեռով զենք ուղարկելու կամ առաքելու համար:

3.6. Չնայած ՀՀ օրենսդրությամբ զենքի սեփականատիրոջ համար սահմանվել է պարտականություն՝ զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, այնուամենայնիվ, տվյալ դեպքում ևս նշված պարտականության չկատարումը զենքի սեփականատիրոջ համար չի առաջացնում որևէ անբարենպաստ իրավական հետևանք:

Հարկ է նշել, որ սեփականատիրոջ համար զենքի կորսվելու, հափշտակվելու մասին անհապաղ իրավասու մարմնին հայտնելու պարտականության սահմանումն ունի իրավաչափ հիմք և նպատակ է հետապնդում քրեական վարույթի շրջանակներում քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ «տաք հետքերով» հայտնաբերել օրինական

շրջանառությունից դուրս եկած զենքը՝ այդ կերպ կանխելով վերջինի հետագա ապօրինի շրջանառությունը, դրա գործադրմամբ հանցանքների կատարումը, ինչպես նաև վերականգնել զենքի սեփականատիրոջ խախտված իրավունքները:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել զանցակազմով, որը վարչական պատասխանատվություն կսահմանի զենքի սեփականատիրոջ կողմից զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին իրավասու մարմին չհայտնելու համար:

4. ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը հանդես է գալիս որպես ինքնուրույն հանցագործություն և դուրս է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակից: Այն դեպքում, երբ ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխությունների ենթարկված քաղաքացիական ողորկափող հրազենի շրջանառությունը (իրացնել, պահել, փոխադրել, առաքել կամ կրել) իրականացնում է այն անձը, ով պատրաստել կամ ձևափոխել է այն, ապա վերջինիս արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ և 336-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համակցությամբ: Տվյալ դեպքում, ըստ էության, գործ ունենք հանցանքների անխուսափելի համակցության հետ:

5. Համապատասխան ստանդարտներում սառը զենքի համար սահմանված կառուցվածքային տարբերակիչ հատկանիշները հնացած են և արհեստական՝ զենքերը կենցաղային նշանակության կամ հանրորեն վտանգավոր այլ առարկաներից տարբերակելու համար: Անձի կյանքի և առողջության համար սպառնալիքի տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն, և որևէ քրեագիտական չափանիշ ինքնին չի կարող որոշել առարկայի իրական հանրային վտանգավորությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով սույն հարցի վերաբերյալ արտասահմանյան երկրներում ձևավորված լավագույն փորձը՝ առաջարկում ենք ապաքրեականացնել սառը զենք կրելը, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքից դուրս բերել սառը զենքի վերաբերյալ առկա իրավակարգավորումները, միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ գլխում նախատեսել հետևյալ բովանդակությամբ նոր հանցակազմ՝

«**Հոդված 334.1. Դանակ կամ հանրավտանգ այլ առարկա կրելը**

1. Հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60 մմ երկարության շեղբով կամ սայրով ծալովի դանակի), կռփազենք, լախտ, մահակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով՝ հանրային է համարվում ցանկացած վայր, որտեղ տվյալ պահին հանրությունն ունի կամ կարող է ունենալ ազատորեն մուտք գործելու իրավունք, ներառյալ փողոցները, տրանսպորտային միջոցների կայանատեղիները, օդանավակայանները, շուկաները, պուրակները, այգիները, կինոթատրոնները, ցուցասրահները, մարզադաշտերը, ուսումնական հաստատությունները, հասարակական տրանսպորտը և հասարակական սննդի սպասարկման վայրերը:

4. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն հոդվածով նախատեսված հանցագործության համար, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առարկաների կրումը պայմանավորված է եղել աշխատանքային (ծառայողական, մասնագիտական) պարտականությունները կատարելու անհրաժեշտությամբ, կամ ունեցել է այդ առարկաներն իր մոտ պահելու իրավաչափ նպատակ կամ օրինական հիմք: Նշված առարկաների կրումն ինքնապաշտպանության նպատակով արգելվում է»:

6. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները սահմանող հոդվածում օրենսդիրը հստակեցրել է ՀՀ քրեական օրենսգրքով զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումների հետ բովանդակային առումով համընկնող հասկացություններից երեքի՝ «զենք կրելու», «զենք պահելու» և «զենք տեղափոխելու» բովանդակությունը: Ընդ որում, թեև Օրենքում ամրագրված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հնարավոր է եզրահանգել, որ հիշյալ հասկացությունների պարզաբանումը միտված է զենքի համար սահմանված հիմքերով և կարգով տրվող թույլտվությունների բովանդակության բացահայտմանը, այնուհանդերձ, դրանք չեն կարող անտեսվել ՀՀ քրեական օրենսգրքում զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումները մեկնաբանելիս: Այլ կերպ՝ զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումների բովանդակությունը չի կարող բացահայտվել հիշյալ հասկացությունների բովանդակությունից տարանջատված, և դրանք անհրաժեշտ է դիտարկել նշված դրույթների հետ համակցության մեջ:

Հիշյալ մոտեցումն անխուսափելիորեն առաջ է բերում մի շարք խնդիրներ, որոնք ենթադրում են դրանց կարգավորմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների և լրացումների նախաձեռնում:

6.1. Այս համատեքստում, նախևառաջ, հարկ է նկատել, որ օրենսդիրը «զենք կրել» հասկացության բովանդակությունը ձևակերպել է Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում «զենքի ապօրինի կրում» հասկացության վերաբերյալ ձևավորված մոտեցման լույսի ներքո՝ իրավաբանորեն արժևորելով զենքի՝ անձի մոտ գտնվելու հանգամանքը:

Մինչդեռ, այսպիսի մոտեցումը ոչ ամբողջական է արտացոլում նշված հասկացության բովանդակությունը:

6.2. ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներ հանդիսացող ապօրինի կերպով զենք պահելու և փոխադրելու բովանդակության բացահայտումը «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի՝ նշված հասկացությունները սահմանող դրույթների հետ համակցության մեջ, գործնականում հանգեցնելու է օբյեկտիվ կողմի հիշյալ դրսևորումների կիրառման անհարկի սահմանափակմանը: Մասնավորապես, տվյալ դեպքում ապօրինի կերպով զենք պահելը կարող է մեկնաբանվել որպես դրա տիրապետում՝ զենք պահելու և կրելու կամ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձի բնակության, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ դրա գտնվելու վայրում: Հարկ է նշել, որ քրեական իրավունքի տեսությունում և իրավակիրառ պրակտիկայում նշված հասկացության մեկնաբանության վերաբերյալ տարակարծություններ առկա չեն, և զենքի ապօրինի պահելը դրսևորվում է ինչպես անձի բնակության վայրում, այնպես էլ այլ շինություններում, գաղտնարաններում, ինչպես նաև այնպիսի վայրերում պահելու մեջ, որոնք ապահովում են նշված առարկաների պահպանությունը:

6.3. Վերը նշված խնդիրները հաղթահարելու նպատակով առաջարկում ենք՝

- Ընդլայնել «զենք կրել» հասկացության բովանդակությունը՝ դրանում ներառելով «զենքը գտնվում է այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն» դրսևորումը: Ընդ որում, նկատի ունենալով նշված իրադրության հանրային բարձր վտանգավորությունը՝ *անձի կողմից զենքն անմիջապես գործադրելու հնարավորության* հանգամանքը գործնականում պետք է արժանանա առավել բովանդակային մեկնաբանման: Մասնավորապես, «զենքի ապօրինի կրում» հասկացության կիրառումը պետք է հիմնվի այն մեկնաբանության վրա, որ այն իր մեջ ներառում է ընդհուպ այն իրադրությունները, երբ զենքը գտնվում է ավտոմեքենայի նստատեղին կամ համարժեք այլ վայրում՝ անմիջական գործադրման համար ոչ պատրաստ կամ քողարկված վիճակում (հրազենի, գազային կամ օդաճնշիչ զենքի դեպքում՝ լիցքաթափված կամ առանձնացված պահեստատուփով, փաթեթավորված կամ ծածկաշապիկով, պատյանով կամ այլ տարայով, նետողական զենքի դեպքում՝ փաթեթավորված կամ նետվող հարմարանքն առանձնացված վիճակում, սառը զենքի դեպքում՝ փաթեթավորված, պատյանում կամ այլ տարայում), ինչպես նաև այն իրադրությունը, երբ թեև անձը ֆիզիկապես դուրս է գտնվում ավտոմեքենայից, սակայն տվյալ իրադրությունում (ավտոմեքենայի մոտակայքում գտնվելու կամ այլ հանգամանքով պայմանավորված) զրկված չէ նստատեղին կամ համարժեք այլ վայրում (այդ թվում՝ անմիջական գործադրման համար ոչ պատրաստ կամ քողարկված վիճակում) գտնվող զենքն անմիջապես գործադրելու հնարավորությունից:
- Օրենքի 2-րդ հոդվածում բացահայտել «զենք ձեռք բերել», «զենք իրացնել» և «զենք առաքել» հասկացությունների բովանդակությունը, ինչը կնպաստի իրավական որոշակիության մակարդակի բարձրացմանը՝ հնարավորինս զերծ պահելով իրավական պրակտիկան տարամեկնաբանություններից և թյուրըմբռնումներից:

➢ «Զենք տեղափոխել» և «զենք պահել» հասկացությունների սահմանումներից դուրս թողնել զենք տեղափոխելուն և պահելուն վերաբերող կանոնակարգումները՝ դրանք սահմանելով Օրենքի համակարգային առումով փոխկապակցված այլ հոդվածներում: Այս մոտեցումը նպատակ է հետապնդում հիշյալ հասկացությունների բովանդակությանը հաղորդել հստակություն և կանխատեսելիություն՝ կանխելով իրավակիրառ պրակտիկայում դրանց հետագա տարընկալումները:

6.4. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 2-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ.

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

(…)

12) ***զենք պահել****՝ զենքի տիրապետում՝ ֆիզիկական անձի բնակության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրում,* ***ինչպես նաև շինությունում, գաղտնարանում կամ այնպիսի վայրում, որն ապահովում է զենքի պահպանությունը****.*

13) ***զենք կրել****՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս զենք տեղափոխել չհամարվող արարքը և զենքի տեղաշարժն անձի վրա ամրացված, կախված, պայուսակում դրված կամ ձեռքում բռնած վիճակում,* ***ինչպես նաև զենքի գտնվելն այնպիսի վայրում, որն անձին հնարավորություն է տալիս անմիջապես գործադրել այն****.*

14) ***զենք տեղափոխել (փոխադրել)****՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս* ***զենքի՝ կրել չհամարվող*** *տեղաշարժը.*

15) ***զենք ձեռք բերել՝ որևէ գործարքով (առուվաճառք, նվիրատվություն, փոխանակություն և այլն) զենքի նկատմամբ որոշակի իրավազորության ձեռքբերումը, ինչպես նաև գտնված զենքը յուրացնելը.***

16) ***զենք իրացնել՝ որևէ գործարքով (առուվաճառք, նվիրատվություն, փոխանակություն և այլն) զենքի նկատմամբ ունեցած որոշակի իրավազորության օտարումն այլ անձի.***

17) ***զենք առաքել՝ զենքի տեղափոխումն առանց այն ուղարկողի անմիջական մասնակցության՝ հաղորդակցման կամ այլ միջոցների օգտագործմամբ.*** *(…)»:*

Օրենքի՝ 25-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ՝

«Հոդված 25. Քաղաքացիական և ծառայողական զենք և դրանց փամփուշտներ պահելը, կրելը, օգտագործելը **և տեղափոխելը**

(…)

3. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են իրենց պատկանող զենքը պահել ***զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանմամբ*** *և այնպիսի պայմաններում, որ ապահովվեն դրա պահպանությունը, անվտանգությունը, և բացառվի կողմնակի անձանց համար զենքի հասանելիությունը:*

3.1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են իրենց պատկանող զենքը տեղափոխել լիցքաթափված վիճակում, առանձնացված պահեստատուփով, դրված պահպանակի վրա՝ ծածկաշապիկով կամ պատյանով կամ տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով, նետողական զենքի դեպքում՝ փաթեթավորված և անձի վրա

չամրացված վիճակում, իսկ նետվող հարմարանքը պետք է լինի առանձնացված: (...)»:

7. Զենքի թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) հանգեցնում է ոչ միայն սահմանված վարչահիրավական կարգավորումների չպահպանմանը, այլև էականորեն խաթարում է զենքի շրջանառության իրավական ռեժիմը: Օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքի շրջանառությունը փաստացի տեղի է ունենում առանց իրավական հիմքի: Նշված իրավիճակը վտանգ է ներկայացնում հանրային անվտանգության համար և խաթարում է զենքի շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության արդյունավետությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով արտասահմանյան երկրների լավագույն փորձը՝ առաջարկում ենք.

- Թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո, առանց սահմանված կարգով դրանք երկարաձգելու, զենք պահելու կամ կրելու (իրավաբանական անձի դեպքում՝ պահելու կամ օգտագործելու) դեպքում անձի արարքը որակել զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:
- Անմիջապես քրեական պատասխանատվության կիրառումը բացառելու նպատակով՝ թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի համար Օրենքով սահմանել երկամսյա արտոնյալ ժամկետ:
- Օրենսդրորեն սահմանել, որ արտոնյալ ժամկետում անձն իրավունք չունի կրել կամ օգտագործել այդ զենքը: Այս արգելքին հակառակ՝ զենքը կրելը կամ օգտագործելը նույնպես պետք է որակվի զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով:
- Հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով սահմանել վարչական պատասխանատվություն այն դեպքերի համար, երբ անձը զենքը պահելու, կրելու կամ օգտագործելու թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար դիմումը ներկայացրել է սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ:
- Մշակել և ներդնել թույլտվությունների ժամկետների ավարտի վերաբերյալ նախնական ծանուցման (reminder notice) արդյունավետ էլեկտրոնային գործիքակազմեր (մեխանիզմներ): Այս ոլորտում ինքնաշխատ էլեկտրոնային ծանուցման համակարգերի մշակումը և ներդրումը կարող է հանդիսանալ կանխարգելիչ միջոց՝ հնարավորություն տալով զենքի սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին ժամանակին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ թույլտվությունները երկարաձգելու համար, այդկերպ նվազեցնելով նաև այն դեպքերը, երբ անձը չի երկարաձգում թույլտվությունների ժամկետները պարզապես մոռացության (անփութության) հետևանքով:

7.1. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1 և 12.2 մասերով՝

«12.1. Այն դեպքում, երբ մինչև սույն հոդվածով նախատեսված թույլտվությունների ժամկետների ավարտը անձը սույն հոդվածով

սահմանված կարգով դիմում չի ներկայացրել դրանց ժամկետները երկարաձգելու համար, ապա թույլտվությունների ժամկետներն ավտոմատ երկարաձգվում են երկու ամսով՝ սկսած այն օրվանից, երբ դրանք պետք է ավարտվեին սույն օրենքի համաձայն:

12.2. Սույն հոդվածի 12.1 մասով նախատեսված դեպքում՝ անձը չի կարող կրել կամ օգտագործել այդ զենքը»:

7.2. Առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 192-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ֆիզիկական անձանց կողմից բնակության վայրը փոխելիս, իսկ իրավաբանական անձանց կողմից հաշվառման վայրը փոխելիս զենքի գրանցման (վերագրանցման) ***կամ զենքը պահելու, կրելու կամ օգտագործելու թույլտվությունների ժամկետները երկարաձգելու համար դիմում ներկայացնելու սահմանված ժամկետները*** *կամ ոստիկանությունում զենքը հաշվառման վերցնելու կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր միավոր զենքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով»:*

8. ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավանորմի ձևակերպումը դժվար է համարել հաջողված, ուստի անհրաժեշտ է բովանդակային առումով վերաձևակերպել այն: Մասնավորապես, անհրաժեշտ է բացառել խրախուսական նորմի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելն այն դեպքերում, երբ զենքի հանձնումը տեղի է ունենում անձի ձերբակալման, դա հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների ընթացքում կամ դրանցից անմիջապես առաջ, երբ տեղում նախապատրաստվում է նշված գործողությունների իրականացումը: Ընդ որում, դրա բովանդակությունը սահմանելիս հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք հստակեցնել, որ ձերբակալման դեպքում զենքը հանձնած անձը խրախուսական նորմի ուժով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հանձնում է ապօրինի կերպով կրվող (հագուստում, իր մոտ գտնվող իրերում կամ մարմնի վրա գտնվող), այլ ոչ թե պահվող զենքը:

8.1. Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված խրախուսական նորմի՝ ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելու, դրանք ձևափոխելու կամ նորոգելու դեպքում, խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից դեռևս նախկինի պես օրենսդրորեն արժևորվում է զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալումը: Այս առումով հարկ է փաստել, որ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ զենքի հանձնումը խրախուսող նորմերում նման տարբերակված մոտեցման համար հնարավոր չէ գտնել որևէ ողջամիտ հիմնավորում, ուստի անհրաժեշտ է ապահովել քննարկվող իրավակարգավորումների միասնականությունը:

8.2. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Սույն հոդվածում, սույն օրենսգրքի 334-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով, սույն օրենսգրքի 334-րդ կամ 336-րդ հոդվածով նախատեսված քրեական

պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ անձն այդ առարկաները հանձնել է ձերբակալումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում՝ հագուստի միջից, իր մոտ գտնվող իրերից կամ մարմնի վրայից, ինչպես նաև դրանք հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների կատարումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:

8.3. Հիշյալ խրախուսական նորմի գործնական կիրառումը պետք է հիմնվի հետևյալ մեկնաբանությունների վրա՝

➢ Խրախուսական նորմի ուժով անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե զենքը հանձնելու պահին իրավասու մարմինները դրա գտնվելու վայրի մասին դեռևս տեղեկություն չունեն: Նշված կանոնից բացառություն են այն դեպքերը, երբ՝ ա) անձը ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ, 335-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաները հանձնել է ձերբակալումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում՝ հագուստի միջից, իր մոտ գտնվող իրերից կամ մարմնի վրայից (ընդ որում, տվյալ դեպքում էական չէ, թե ինչ բնույթի հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով է իրականացվում ձերբակալումը), բ) անձն այդ առարկաները հանձնել է դրանք հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունների կատարումից անմիջապես առաջ կամ դրա ընթացքում:

➢ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ, 335-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը ենթադրում է իրավասու մարմինների կողմից որոշակի փաստական տվյալների կամ տեղեկությունների վրա հիմնված հետևություն այն մասին, թե կոնկրետ որ բնակարանում, շենքում, շինությունում կամ այլ տեղանքում են պահվում նշված առարկաները:

➢ **Միևնույն ժամանակ, նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը չի ենթադրում, որ իրավասու մարմինները պետք է ամենայն մանրամասնությամբ և կոնկրետությամբ տեղեկացված լինեն**, թե որոնվող առարկաները բնակարանի, շենքի, շինության կամ այլ տեղանքի որ մասում են գտնվում՝ ննջասենյակում, խոհանոցում, ավտոտնակում, մեքենայի բեռնախցիկում կամ այլ վայրում:

➢ Հնարավոր կամայականություններից խուսափելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ, 335-րդ կամ 336-րդ հոդվածներում նշված առարկաների գտնվելու վայրի մասին իրավասու մարմինների տեղեկացվածության աղբյուր կարող են հանդես գալ, որպես կանոն, քրեական վարույթի նյութերում առկա և որոշակի վայրում այդ առարկաների գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներին, անհրաժեշտ է նշել, որ դրանք որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի վայրում նշված առարկաների գտնվելու վերաբերյալ, հետևաբար օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն անտեսելն անթույլատրելի է: Միևնույն ժամանակ, օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով (մասնավորապես՝ գործունեության գաղտնի մեթոդների և միջոցների կիրառումը) պայմանավորված՝ մի շարք դեպքերում հնարավոր չէ գնահատել

օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն ևս կարող է հանդես գալ որպես նշված առարկաների գտնվելու վայրի մասին իրավասու մարմինների տեղեկացվածության ինքնուրույն աղբյուր:

➢ Այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինն ավարտում է զենքը հայտնաբերելու նպատակով իրականացվող քննչական գործողությունը, ապա դրանից հետո անձի կողմից զենքի հանձնումը բոլոր դեպքերում պետք է հիմք հանդիսանա քննարկվող խրախուսական նորմի ուժով վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Վիրաբ Համբարձումյան, «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը սահմանող օրենսդրության սոցիալական հիմնավորվածությունը», Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (14), 2025, էջեր 104-118,

2. Վիրաբ Համբարձումյան, «Ապօրինի կերպով զենք կրելը որպես զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորում», Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 2 (15), 2025, էջեր 128-140,

3. Վիրաբ Համբարձումյան, «Զենքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումները մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում», Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2025, № 7-9 (313-315), էջեր 64-85,

4. Սերգեյ Առաքելյան, Վիրաբ Համբարձումյան, «Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերի քրեաիրավական որոշ հիմնահարցեր», Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2025, Vol. 16, № 2 (43), նոյեմբեր, էջեր 53-67,

5. Վիրաբ Համբարձումյան, «Ողորկափող հրազենը որպես քաղաքացիական զենքի տեսակ. քրեաիրավական որակման որոշ հիմնախնդիրներ», Արդարադատություն, 2025 № 2 (61), էջեր 68-79,

6. Վիրաբ Համբարձումյան, «Սառը զենք հասկացության իրավական նշանակությունը. դոկտրինալ և գործնական հիմնախնդիրներ», Դատական իշխանություն, հունվար-մարտ 2026, № 1-3 (319-321), էջեր 135-150,

7. Վիրաբ Համբարձումյան, «Իրավական որակման հիմնախնդիրները զենքի ժամկետանց թույլտվությունների դեպքում», Արդարադատություն, 2026 № 3 (64), էջեր 54-62:

ВИРАБ РУБИКОВИЧ АМБАРЦУМЯН

ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ НЕЗАКОННОГО ОБОРОТА ОРУЖИЯ

РЕЗЮМЕ

Оружие, имея важное значение в процессе поддержания правопорядка, защиты прав человека и обеспечения безопасности, нередко используется также в целях нарушения прав человека.

В этом контексте одной из гарантий эффективной борьбы с незаконным оборотом оружия является уголовное законодательство. Четкие и прогрессивные правовые регулирования, соответствующие развитию общественных отношений в данной сфере, правильная и обоснованная квалификация деяний, справедливые наказания, а также совершенствование уголовного законодательства и правоприменительной практики могут обеспечить безопасность личности, организаций, государства и общества, способствуя повышению эффективности борьбы с незаконным оборотом оружия.

Между тем исследования показывают, что вследствие несовершенства уголовного законодательства правоприменительная практика часто идет по неверному пути, приводя к неправильной квалификации деяний. Кроме того, иногда неоднозначное восприятие уголовного законодательства в правоприменительной деятельности проявляется по-разному, формируя противоречивую следственно-прокурорскую и судебную практику.

Оценка и анализ правового регулирования оборота оружия приобретают особую актуальность в современных условиях, когда в Республике Армения введён в действие Закон «О регулировании оборота оружия», которым существенно смягчены правила приобретения и владения гражданским оружием. В связи с этим возникла необходимость также оценить новые правовые регулирования с точки зрения обеспечения фундаментальных прав человека.

Объект и предмет исследования рассматривались с применением как общенаучных, так и специальных методов научного познания, таких как анализ, синтез, индукция, дедукция, обобщение, сравнительно-правовой, логико-аналитический, системно-структурный и метод правового моделирования.

Научная новизна диссертации отражена в выносимых на защиту положениях, в заключении, а также в теоретических обобщениях и научно-практических предложениях, сформулированных автором. Результаты исследования могут быть использованы в дальнейших научных исследованиях, а также в рамках учебных курсов, предмет которых связан с уголовно-правовыми проблемами незаконного оборота оружия.

Проведенные по теме исследования работы, анализы, представленные предложения и их обоснования могут быть использованы в

правотворческой деятельности, а также способствовать совершенствованию судебной и прокурорско-следственной практики.

Диссертация выполнена на кафедре уголовного права юридического факультета Ереванского государственного университета. Результаты исследования отражены в 7 (семи) опубликованных статьях автора. Кроме того, результаты исследования были представлены автором на научных конференциях.

VIRAB HAMBARDZUMYAN

Criminal Law Issues of the Regulation of Illegal Arms Trafficking

RESUME

Weapons, while playing an important role in maintaining public order, protecting human rights, and ensuring security, are also frequently used for the violation of human rights.

In this context, one of the guarantees of effective combating of illegal arms trafficking is criminal legislation. Clear and progressive legal regulations, consistent with the development of social relations in this field, the correct and well-founded qualification of acts, fair penalties, as well as the improvement of criminal legislation and law enforcement practice, can ensure the safety of individuals, organizations, the state, and society, thereby contributing to the effectiveness of combating illegal arms trafficking.

Meanwhile, research shows that due to the imperfections of criminal legislation, law enforcement practice often follows an incorrect path, leading to the misclassification of acts. In addition, the sometimes ambiguous interpretation of criminal legislation in law enforcement activities manifests in different ways, forming a contradictory investigative-prosecutorial and judicial practice.

The study and analysis of the legal regulation of arms circulation have become increasingly important in modern times, when the Law “On the Regulation of Arms Circulation” has been enacted in the Republic of Armenia, significantly easing the rules for the acquisition and possession of civilian weapons. In this context, there has arisen a need to assess the new legal regulations in light of the guarantee of fundamental human rights.

The object and subject of the research were examined using both general scientific and special methods of scientific cognition, such as analysis, synthesis, induction, deduction, generalization, comparative legal, logical-analytical, systemic-structural, and legal modeling methods.

The scientific novelty of the dissertation is reflected in the provisions submitted for defense, in the conclusion, as well as in the theoretical generalizations and scientific-practical proposals formulated by the author. The results of the research can be used in further scientific studies, as well as in academic courses related to the criminal-legal problems of illegal arms trafficking.

The research work carried out on the topic, the analyses, the presented proposals, and their justifications may be used in law-making activities, as well as contribute to the improvement of judicial and prosecutorial-investigative practice.

The dissertation was completed at the Department of Criminal Law of the Faculty of Law of Yerevan State University. The results of the research are reflected in 7 (seven) published articles by the author. In addition, the results of the research were presented by the author at scientific conferences.